**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ**
**ՊԱՏԳԱՄԱՎՈՐ**

30 սեպտեմբերի 2022

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահի
ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Սիմոնյան,

Համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 65-րդ եւ 67-րդ հոդվածների՝ օրենսդրական նախաձեռնության կարգով Ձեզ եմ ներկայացնում «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը:

Ազգային ժողովի աշխատակարգի 25-րդ կետի համաձայն՝ գրությանը կցվում են՝

ա) նախագիծը (հիմնական զեկուցող՝ Սիսակ Գաբրիելյան),

բ) նախագծի ընդունման հիմնավորումը,

գ) գործող օրենքում փոփոխվող հոդվածի մասին տեղեկանքը:

Խնդրում եմ օրենքի նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Հարգանքով՝ Սիսակ Գաբրիելյան (031)

(055)

(057)

ՆԱԽԱԳԻԾ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՕՐԵՆՔ

## «ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հուլիսի 16-ի ՀՕ-395-Ն օրենքը (այսուհետ՝ «Օրենք») 44-րդ հոդվածի՝

1) 3-րդ մասում՝ «: Ընդ որում, ծրագրերի հերթականությունը պետք է սկսվի Հանրային հեռարձակողների ծրագրերից» բառերը փոխարինել «կախված վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքից, նույն հերթականությամբ» բառերով.

2) լրացնել 3.1-րդ մաս՝ հետևյալ բովանդակությամբ.

«3. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերը եթեր են հեռարձակվում հետևյալ հերթականությամբ՝

1) Հանրային հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ՝ սլոթի օգտագործման լիցենզիայով գործող Հանրային Հեռարձակողների,
2) հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
3) մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
4) մարզային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
5) սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հանրային հեռարձակողները,
6) միջպետական պայմանագրի հիման վրա Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,
7) հեղինակազորված Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2023 թվականի հունվարի 1-ից:

# ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

### 1. Անհրաժեշտությունը.

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի ում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ՝ Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերի հեռարձարկման առաջնահերթությունների ու հերթականության համակարգի միասնական կիրառության սահմանումը՝ անկախ սփռման տարածքից, օպերատորից և հեռարձակողից:

### 2. Խնդիրները եւ կարգավորման նպատակը.

Առաջնորդվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ հոդվածով, ՀՀ գործող ցանցային օպերատորները իրենց տրամադրված տեսալսողական ծրագրերի տարածման հերթականությունը սահմանում են ինքնուրույն: Նման մոտեցումը առաջին հայացքից ընկալվում է օպերատորի գործունեության ազատություն, սակայն սպառողի համար առաջ է բերում օգտվելու անհարմարություններ և դժգոհություն, քանի որ հեռարձակվող ծրագրերը տարբեր հերթականությամբ են հասանելի հեռուստալսարանին:

Նախաձեռնության նպատակն է սահմանել Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերի եթեր հեռարձակման հերթականությունը:

Նախաձեռնության համար հիմք է հանդիսացել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի մոնիթորինգի արդյունքներ ու ստացված դիմումները:

### 3. Ակնկալվող արդյունքը.

Օրենքի նախագիծը ընդունելու արդյունքում Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի արդյունքի սպառողները կկարողանան օգտվել հեռարձակվող ծրագերի նույնական հերթականությունից և հեշտությամբ ընտրել իրենց նախընտրելի ծրագիրը:

*Տեղեկանք*
*«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի փոփոխվող և լրացվող հոդվածի վերաբերյալ*

**Հոդված 44. Հանրային և մասնավոր մուլտիպլեքսում գործող Հեռարձակողները**

1. Կարգավորող պետական մարմինը մրցույթները հայտարարում է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման սլոթի օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու, նոր կամ ազատ սլոթ առաջանալու դեպքում:

2. Հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա կարող են ստանալ միայն Հայաստանի Հանրապետությունում գործող Հեռարձակողները, եթե այլ բան նախատեսված չէ մինչև սույն դրույթն ուժի մեջ մտնելը կնքված միջազգային պայմանագրով:

3. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերն իրենց վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքներին համապատասխան տարածման իրավունքով անվճար տրամադրվում են ցանցային օպերատորներին: Ցանցային օպերատորները պարտավոր են տարածել իրենց՝ անվճար տարածման իրավունքով տրամադրված տեսալսողական ծրագրերը՝ ~~: Ընդ որում, ծրագրերի հերթականությունը պետք է սկսվի Հանրային հեռարձակողների ծրագրերից:~~ ***կախված վերգետնյա հաճախականությունների սփռման տարածքից, նույն հերթականությամբ»:***

*3.1. Հանրային մուլտիպլեքսում ներառված բոլոր տեսալսողական ծրագրերը եթեր են հեռարձակվում հետևյալ հերթականությամբ՝*

1) *Հանրային հեռարձակողների տեսալսողական ծրագրերը, բացառությամբ՝ սլոթի օգտագործման լիցենզիայով գործող Հանրային Հեռարձակողների,*
2) *հանրապետական սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,*
3) *մայրաքաղաքային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,*
4) *մարզային սփռում ապահովող սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,*
5) *սլոթի օգտագործման լիցենզիա ստացած Հանրային հեռարձակողները,*

*6) միջպետական պայմանագրի հիման վրա Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը,*

*7) հեղինակազորված Հեռարձակողների տեսալսողական ծրագրերը:*

4. Սլոթի օգտագործման լիցենզիայի ժամկետը լրանալու հիմքով մրցույթը հայտարարվում է այդ լիցենզիայի գործողության ժամկետը լրանալուց չորս ամիս առաջ:

5. Հանրային մուլտիպլեքսում ազատ սլոթ առաջանալու դեպքում կարգավորող պետական մարմինը մեկամսյա ժամկետում հայտարարում է մրցույթ:

6. Հանրային մուլտիպլեքս ցանցում նոր սլոթ առաջանալու դեպքում Կառավարության լիազոր մարմինը այդ մասին տեղեկացնում է կարգավորող պետական մարմնին, որը մեկամսյա ժամկետում հայտարարում է սլոթի օգտագործման լիցենզավորման մրցույթ:

7. Թեմատիկ ուղղվածության չափորոշիչները, դրանց հասկացությունները սահմանվում են կարգավորող պետական մարմնի որոշմամբ:

8. Թվային հեռարձակման տեխնիկական հնարավորություն առաջանալու դեպքում լսողական ծրագրեր հեռարձակողները կարող են ներառվել մուլտիպլեքսում՝ իրենց լիցենզիայի պայմաններին համապատասխան:

9. Մասնավոր մուլտիպլեքսում գործող Հեռարձակողները տեսալսողական ծրագրերի հեռարձակումն իրականացնում են մասնավոր մուլտիպլեքս օպերատորի տրամադրած սլոթի միջոցով: